




Սուղակ :

ուտելով կ'ապրին . անոր համար մը-
սերնին ալ ձուկ կը հօտի ու անհամ-
է , թէպէտեւ եղտա : Բոյներնին ե-
ղէպներու ու սէգերու մէջ կը շինեն՝
անանկ որ ան ալ ջրին երեսը կրնայ
էենալ կամ լողալ : Թէ էգը և թէ
արուն փոխն 'ի փոխը թուխս կը նըս-
տին հաւկիթներուն վրայ . ու թէ
որ անոնցմէ հեռանալ պէտք ըլլայ՝
վրան ջրի խոտերով կը ծածկեն :

Ետեք հրացանով զարնելը խիստ
դժուար է . վասն զի աշուրնին սաս-
տիկ սուր ըլլալով , կասկած մը առ-
նելուն պէս , և կամ կայծ մը տեսած-
նուն պէս՝ ջրին տակը կ'ընկզմին անե-
րեղթ կ'ըլլան :

Սուղակին մեծութիւնը ամէն տեղ

նոյն չէ . Եւրոպայի տեսակներուն
մէջ ամենէն մեծը բազի չափ է , ա-
մենէն պզտիկն ալ լորամարգիի չափ :
Սովորաբար իրենց կանըկին գոյնը
մուր մոխրագոյն է , փորունը ճեր-
մակ փայլուն . տարիքնին որ առնեն՝
գլուխնին սև փետուրներով ցցունք
մը կ'ունենան , ոմանք կարմրագոյն
մանեակ մըն ալ կ'ունենան վզերնուն
տակը :

ՀԱՆԵԼՈՒԿ

ՃԵՐԲԱԿ ԳԱՇԽԻԿ , ՍԵ ՍԵ ՀՐՆՈՒԿ ,
ՁԵՌՔՈՎ ԳԱՆԷ , ԸԵՂՈՎ ՀՐՆՃԷ :

ՆՈՅՆՄԲԵՐԻ ՀԱՆԵԼՈՒԿՆԷՐ ԲՃԻՃՈՎ,
ՍԷՂԻ :